



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

15 հուլիսի 2016Ն.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Վ. Հովհաննիսյանի

Ուսումնասիրելով Կարապետ Սողիկեանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Կարապետ Սողիկեանը 2016 թվականի հունիսի 28-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի, 217-րդ հոդվածի 2-րդ մասի, 220.4-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ

Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ /1-4 մասեր/, 61-րդ /1-ին մաս/, 63-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը» :

Ըստ դիմողի՝ իր նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, պայմանավորված վերջիններիս նորմատիվ բովանդակության անորոշությամբ, կիրառվել են ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող մեկնաբանությամբ՝ հանգեցնելով վիճարկվող դրույթների կամայական կիրառմանը, ինչը, ըստ էության, վերահաստատվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանի հիմնավորումներից և եզրահանգումներից բխում է, որ իր նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է այն մեկնաբանությամբ, ըստ որի՝ ժառանգության պարտադիր բաժնի ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգության փաստացի ընդունման դասական եղանակները, որոնք ուղղակիորեն բխում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասից, կիրառելի չեն, և այս դեպքում ժառանգությունը կարող է ընդունվել միայն ժառանգական իրավունքները ձևակերպելու՝ նոտարին դիմելու միջոցով:

Դիմողի կարծիքով՝ սույն գործով դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, դրանց իրավական անորոշությամբ պայմանավորված /առաջին հերթին ժառանգության ընդունման թվարկված երկու եղանակների՝ բոլոր հիմքերով ժառանգության ընդունման դեպքերում կիրառելի լինելու վերաբերյալ հստակեցման բացակայության հետևանքով/, կիրառվել են այնպիսի մեկնաբանությամբ, որը հանգեցրել է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության, այդ թվում՝ ժառանգման իրավունքի, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև խտրականության արգելքի, օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքների խախտմանը, որի արդյունքում անձը, որն է իրավաչափ սահմանադրական նպատակի բացակայության պայմաններում, զրկվում է ժառանգության իր պարտադիր բաժինը փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու հնարավորությունից:

Դիմողը գտնում է, որ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանող՝ սույն դիմումով վիճարկվող դրույթների կիրառման արդյունքում

անհամաչափորեն սահմանափակվել են իր սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, խախտվել են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները:

2. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի, 217-րդ հոդվածի 2-րդ մասի, 220.4-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները չեն կիրառվել դիմողի նկատմամբ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի առումով դիմումն ակնհայտ անհիմն է:

Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 06.11.2015 թվականի թիվ ԵԿԴ-4891/02/14

քաղաքացիական գործով Կարապետ Սողիկեանի վերաքննիչ բողոքը մերժել է, ի թիվս այլնի, նաև այն պատճառաբանությամբ, որ չնայած այն հանգամանքին, որ Կարապետ Սողիկեանի կողմից վերաքննիչ բողոքին կից ներկայացված է «Կենտրոն» համատիրության կառավարչի կողմից 13.11.2014 թվականին տրված թիվ 128/86 գրությունը, որի համաձայն՝ Կողբացու փողոց, 42 շ., 78 բնակարանի բնակիչ՝ հանգուցյալ Ռուզաննա Նիկոլայի Գևորգյանը, մահացած՝ 27.01.2014թ., մինչև մահը բնակվել է նույն հասցեում, նրա մահից հետո այնտեղ բնակվում են նրա ամուսինը՝ Կարապետ Սողիկեանը և այլոք, այն չի հիմնավորում Կարապետ Սողիկեանի կողմից փաստացի տիրապետման հիմքով Ռ. Գևորգյանի ժառանգությունն ընդունելու փաստը՝ նկատի ունենալով, որ տվյալ բնակարանը չի մտնում ժառանգական զանգվածի մեջ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ «...Կարապետ Սողիկեանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի ուժով պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ հանդիսանալու հանգամանքը դեռևս բավարար հիմք չէ Սարգիս Գևորգյանի՝ Ռ.Գևորգյանին պատկանող ամբողջ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հանգամանքը վիճարկելու համար, քանի որ գործով հաստատված չէ Կարապետ Սողիկեանի՝ Ռուզաննա Գևորգյանի ժառանգական զանգվածից իրեն հասանելիք պարտադիր բաժինն ընդունելու համար բավարար միջոցներ ձեռնարկելու, այն է՝ սահմանված ժամկետում և սահմանված կարգով ժառանգության ընդունմանը հետամուտ լինելու փաստը»: Այսինքն, դիմողի փաստարկներն առ այն, որ «...ժառանգության պարտադիր բաժնի ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգության փաստացի ընդունման դասական եղանակները, որոնք ուղղակիորեն բխում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասից, կիրառելի չեն, և այս դեպքում ժառանգությունը կարող է ընդունվել միայն ժառանգական իրավունքները ձևակերպելու՝ նոտարին դիմելու միջոցով», ակնհայտ անհիմն են, քանի որ դիմողը չի իրականացրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժառանգության ընդունման երկու եղանակներից և ոչ մեկը. ոչ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում է ներկայացրել, ոչ ժառանգված գույքը փաստացի տիրապետել կամ կառավարել է:

Հետևաբար, դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև

պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Կարապետ Սողիկեանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

15 հուլիսի 2016 Մի 3 ի 3 ԿԸ
ԵՍՍ 1 ձ/2-21